ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 3

2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 2/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան **«18» սեպտեմբերի 2025թ.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Անուշ Դանիելյանը (անձնագիր՝ AV0514020, տրված՝ 09.11.2022թ., 006-ի կողմից) (այսուհետ նաև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 2/24-ՊԱ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություն կատարելու մասին.

1. Պայմանագրի «Պայմանագրի առարկան» 1-ին բաժնի 1.2 կետը փոփոխել հետևյալ կերպ. «Կատարողը պարտավորվում է «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը վերապահված «1192. Կրթության որակի ապահովում» ծրագրի «11024. ՀՀ պետական դպրոցների ԳՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստում նոր ստանդարտներին համապատասխան» և «32007. ՀՀ պետական դպրոցների՝ ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովում» միջոցառման շրջանակներում իրականացնել հետևյալ գործառույթները.
2. Պայմանագրի «Ծառայությունների մատուցման կարգը» 2-րդ բաժնի 2.2. կետը փոփոխել և Պայամանգրի գործողության ժամկետը երկարաձգել՝ սահմանելով նոր ժամկետ, այն է՝ «Պայմանագիրը գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը»:
3. Պայմանագրի 4.1.2 կետը փոփոխել և ավելացնել հետևյալ նոր պարբերությամբ. «Ամփոփված մրցույթների շրջանակներում մասնավորապես՝ թիվ ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/5 ծածկագրով գնման գործընթացների արդյունքում կնքված պայմանագրերով 2025 թվականին դպրոցներին մատակարվելիք լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների համապատասխանության դիտարկման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:
4. Պայմանագրի «Պայմանագրի գինը և վարձատրությունը» բաժինը փոփոխել և լրացնել նոր 4.1.3 կետով, այն է՝ «Ֆիզիկա առարկայի գծով 2025 թվականին անցկացվող բոլոր մրցույթների գնահատման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 95.000 (իննսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:»
5. Պայմանագրի «Պայմանագրի գինը և վարձատրությունը» բաժինը փոփոխել և լրացնել նոր 4.1.4 կետով, այն է՝ «Ընդ որում կողմերն ընդունում են, որ Պայմանագրի 4.1.3 կետով սահմանված գումարը վճարվելու է ֆիզիկա առակայի գծով 2025 թվականին անցկացվող բոլոր մրցույթների գնահատման արդյունքում ներկայացված հաշվետվությունների դիմաց՝ միանվագ կարգով:»
6. Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ համաձայնագրով սահմանված պայմանները համարել ուժի մեջ՝ 2025 թվականի

հուլիսի 21-ից: Համաձայնագիրը համարվում է 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 2/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում անբաժանելի մաս:

7. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, 2 (երկու) էջից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
8. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վրացյան 73,
ՀՎՀՀ՝ 02550991,
Բանկ՝ ՀՀ գանձապետարան,
Հ/Հ՝ 90011046670

Տնօրենի պաշտոնակատար՝
Գ. Հովհաննիսյան

ստորագրություն

Կատարող

Անուշ Դանիելյան
Անձնագիր՝ AV0514020, տրված՝
09.11.2022թ., 006-ի կողմից
ՀԾՀ՝ 8105780026
Հաշվառման հասցե՝ ՀՀ, Սյունիքի մ., ք.
Քաջարան, Բակունցի փ., 4 շ., 6 բն.
Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163005399676
Անուշ Դանիելյան

ստորագրություն